ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

20 մայիսի 2017թ. **N 270-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԵԼՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Ելք» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վ. Հովակիմյանի 19.05.2017թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

«Ելք» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վ. Հովակիմյանի կողմից 19.05.2017թ. ներկայացվել է դիմում՝ 7/51 և 7/53 տեղամասերում 2017թ. մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Համաձայն ներկայացված դիմումի՝

1. Փաստերի շարադրանք

1.1 Թիվ 7/51 տեղամաս

1.1.1 2017 թվականի մայիսի 14-ին թիվ 7/51 տեղամասում կազմվել է Երևանի ավագանու ընտրությունների քվեարկության արդյունքների արձանագրություն, ըստ որի՝ քվեարկությանը մասնակցել է 566 ընտրող, որից «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկել է 19 (տասնինը), «Երկիր Ծիրանի» կուսակցության օգտին՝ 12 (տասներկու) և 387-ը, (երեք հարյուր ութսունյոթը) Հայաստանի Հանրապետական կուսակցության օգտին: 148 (հարյուր քառասունութ) քվեարթերթիկ ճանաչվել է անվավեր:

1.1.2 Քվեարկության արդյունքների ամփոփումից հետո «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի վստահված անձը տեղեկացրել է, որ անվավեր քվաթերթիկների մեծ մասը եղել են «դատարկ»: Գրիչի նշումը բացակայել է, սակայն նկատելի է եղել, որ քվեաթերթիկի վրա նշում կատարված է եղել, բայց թանաքը բացակայում է:

1.1.3 Թիվ 7/51 տեղամասում քվեարկության արդյունքները վերահաշվարկելու մասին «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի վստահված անձ Արամ Պետրոսյանի կողմից ստորագրված դիմումը մայիսի 16-ին ժամը 10:55-ին ներկայացվել է թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով:

1.1.4 2017 թվականի մայիսի 16-ին թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն իրականացրել է 7/51 տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկ:

1.1.5. Վերահաշվարկի ընթացքում արձանագրվել է, որ անվավեր քվեաթերթիկների մեծ մասը իսկապես գրիչի նշում չի պարունակում:

1.1.6 Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը հրաժարվել է մնան քվեաթերթիկները հաշվել ու թիվն արձանագրել՝ պատճառաբանելով, որ արձանագրության վերահաշվարկի բաժնում նման տողը բացակայում է:

1.1.7 «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկված քվեաթերթիկներից մեկի վրա ևս նշումի թանաքը բացակայել է: Քվեաթերթիկի զննությունից ակնհայտ է դարձել, որ դրա վրա ընտրողի կողմից նշում կատարված է եղել, սակայն գրչի թանաքն անհայտ պատճառներով անհետացել է: Այսինքն, քվեարկության արդյունքները ամփոփելիս տվյալ քվեաթերթիկը եղել է վավեր:

1.1.8 «Երկիր ծիրանի» կուսակցության օգտին քվեարկված քվեաթերթիկներից երկուսի վրա ևս թանաքով նշումը բացակայել է, սակայն, դրանց դեպքում ևս նկատելի է եղել, որ ընտրողը նշումը կատարած է եղել, բայց գրչի թանաքն անհետացել է:

1.1.9 Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ անվավեր քվեարթերթիկների տրցակում առկա «դատարկ» քվեաթերթիկների վրա, այնուամենայնիվ նշումներ կատարված են եղել: Սակայն, անհայտ պատճառով թանաքը բացակայել է: Այս փաստն արձանագրվել է նաև նիստին հետևող լրագրողների կողմից: Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի վստահված անձ Վահագն Հովակիմյանին հնարավորություն չի տվել անվավեր քվեաթերթիկների ողջ տրցակը ուսումնասիրել և հստակ պարզել, թե դրանցից կոնկրետ քանիսն են պարունակում անհետացած նշումներ: Չնայած ակնհայտ է եղել, որ 152 անվավեր քվեաթերթիկների մեծ մասը անհետացած նշում են պարունակել:

1.1.10 Անհետացած նշում են պարունակել նաև ՀՀ Ընտրական օրենսգրքով չնախատեսված նշումներ պարունակող քվեաթերթիկները: Այդպիսով տպավորություն էր ստեղծվել, թե իբր այդ քվեաթերթիկներն անվավեր են ճանաչվել սխալ նշման պատճառով: Իրականում, ակնհայտ էր, որ դրանք ևս ի սկզբանե պարունակել են անհետացած նշումները, բայց հետագայում դրանց վրա ավելացել են քվեաթերթիկն անվավեր դարձնող այլ գրառումներ:

1.2. Թիվ 7/53 տեղամաս

1.2.1 2017 թվականի մայիսի 14-ին 7/53 տեղամասում կազմվել է Երևանի ավագանու ընտրությունների քվեարկության արդյունքների արձանագրություն, ըստ որի՝ քվեարկությանը մասնակցել է 462 ընտրող, որից «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկել է 10 (տաս), «Երկիր Ծիրանի» կուսակցության օգտին՝ 3 (երեք) և 448-ը, (չորս հարյուր քառասունութը) Հայաստանի Հանրապետական կուսակցության օգտին: 1 (մեկ) քվեարթերթիկ ճանաչվել է անվավեր:

1.2.2 Քվեարկության արդյունքների ամփոփումից հետո «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի շտաբը տեղեկացրել է, որ 7/53 տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփումը ՀՀ Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով չի իրականացվել, մասնավորա-

պես քվեաթերթիկները ծրարներից հանելիս բոլոր ներկաներին տեսանելի չեն ցուցադրվել, քվեաթերթիկները ծրարներից հանելուց հետո առանց հաշվարկելու փաթեթավորվել են և դրվել ընտրական փաստաթղթերի համար նախատեսված հատուկ պարկի մեջ:

1.2.3 Քվեարկության հաջորդ օրը 2017 թվականի մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրություններում ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ, ավագանու անդամի թեկնածու Վահագն Հովակիմյանը կազմել է թիվ 7/53 տեղամասում քվեարկության արդյունքները վերահաշվարկելու մասին դիմում: Թիվ 7/53 տեղամասում «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի վստահված անձ Մելինե Սարդարյանի հետ մեզ հաջողվեց կապվել միայն քվեարկության հաջորդող երկրորդ օրը՝ մայիսի 16-ին ժամը 9:50-ի սահմաններում: Մայիսի 16-ին ժամը 10:50 –ին Մելինե Սարդարյանը ստորագրել է թիվ 7/53 տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ Վահագն Հովակիմյանի կողմից կազմված դիմումը: Մայիսի 16-ին ժամը 10:55-ին Վահագն Հովակիմյանը վերահաշվարկի դիմումը ներկայացրել է թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով:

1.2.4 Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը մայիսի 16-ին ժամը 14:00-ին մեկնարկած նիստի շրջանակներում ժամը 17:10-ին ձեռնամուխ է եղել թիվ 7/53 տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկին:

1.2.5 Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի նիստում պարզվել է, որ թիվ 7/53 տեղամասի ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանված նմուշի չէ, քանի որ դրա վրա բացակայել է թիվ 7/53 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Օրենսդրությամբ պարկը ստորագրելու իրավունք ունեցողների ստորագրությունները և թիվ 7/53 տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը ևս բացակայել է: Այն, որ տվյալ պարկը իբրև թե կարող էր պարունակել թիվ 7/53 տեղամասի ընտրական փաստաթղթերը, կռահել կարելի էր միայն պարկի վրա մարկերով կատարված «7/53» գրառումից:

1.2.6 «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի վստահված անձ Վահագն Հովակիմյանը պահանջել է արձանագրել այն փաստը, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի նիստում ներկայացված պարկը օրենքով նախատեսված նմուշի չէ, ուստի այն չի կարող համարվել իբրև թիվ 7/53 տեղամասի ընտրական փաստաթղթերի պարկ:

1.2.7 «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի վստահված անձ Վահագն Հովակիմյանի բողոքներն առ այն, ՀՀ Ընտրական օրենսգրքով չնախատեսված նմուշի պարկը չի կարող ներկայացվել իբրև թիվ 7/53 տեղամասի ընտրական փաստաթղթերի պարկ, ըստ այդմ, չի կարող տեղի ունենալ նշված տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկ, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի փոխնախագահ Օլեգ Գրիգորյանի կողմից որակվել է իբրև ընտրական հանձնաժողովի աշխատանքների խոչընդոտում և նա առաջարկել է քննարկել «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի վստահված անձին նիստից հեռացնելու հարցը:

1.2.8 Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության 6 կողմ և 1 դեմ արդյունքներով որոշել է Վահագն Հովակիմյանին հեռացնել նիստից:

1.2.9 «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի վստահված անձ Վահագն Հովակիմյանին նիստից հեռացնելուց հետո թիվ 7 տարածքային ընտրական հանձաժողովը շարունակել է նիստը և ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջներին չհամապատասխանող պարկը ներկայացնելով իբրև թիվ 7/53 տեղամասի ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկ ու իրականացվել է նշված տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ: Այսպիսով, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն իրականացրել է անօրինական գործողություն:

1.2.10 Մեր կողմից ուսումնասիրվել է թիվ 7/53 տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստի տեսագրությունը, որը ներբեռնվել է քվեարկության ընթացքն օնլայն հեռարձակող համակարգից: Տեսագրությունը կցված է դիմումին: Հարկ է նկատել նաև, որ համապատասխան համակարգով տեղամասերի տեսագրությունները ներբեռնելու հնարավորությունն սկսել է գործել մայիսի 16-ի առավոտյան:

Տեսագրության ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած փաստերը

Մայիսի 14-ին ժամը 20:00-ին թիվ 7/53 տեղամասային ընտրական հանձնաժողովը սկսել է քվեարկության արդյունքների ամփոփումը , որը բազմիցս ընդհատվել է նշված հանձնաժողովի նախագահի Արսեն Համբարձումյանի կողմից տեղամասից պարբերաբար դուրս գալու պատճառով:

Մայիսի 14-ին ժամը 21:28-ին 7/53 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արսեն Համբարձումյանը բացել է քվեատուփը և հանել է քվեաթերթիկների ծրարների առաջին տրցակը:

Արսեն Համբարձումյանը քվեաթերթիկները ծրարից հանելով առանց ներկաներին ցուցադրելուն փոխանցել է կողքը նստած անձին, ենթադրվում է նա թիվ 7/53 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներից է:

Քվեաթերթիկները ծրարից հանելու գործընթացը ևս մի քանի անգամ ընդհատվել է Արսեն Համբարձումյանի տեղամասից դուրս գալու պատճառով:

Մայիսի 14-ին ժամը 22:05-ին Արսեն Համբարձումյանը ավարտել է քվեաթերթիկները ծրարից հանելու գործընթացը:

Մայիսի 14-ին ժամը 22:05-ին քվեաթերթրիկների տրցակները առանց հաշվելու փաթեթավորվել են: Տեսանյութում երևում է, որ Արսեն Համբարձումյանը քվեաթերթիկները տեղադրում է ինչ-որ պարկի մեջ, որը իր տեսքով նման է ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկին:

Մայիսի 14-ին ժամը 22:09–ին թիվ 7/53 տեղամասային ընտրական հանձնաժողովը սկսել է կազմել քվեարկության արդյունքների արձանագրությունը: Այդ ընթացքում ևս Արսեն Համբարձումյանը մի քանի անգամ դուրս է եկել տեղամասից:

Մայիսի 14-ին ժամը 22:25-ին թիվ 7/53 տեղամաս է ժամանել թիվ 7 տարածքային հանձնաժողովի նախագահի տեղակալ Օլեգ Գրիգորյանը: Մայիսի 16-ին թիվ 7/53 տեղամասում քվեարկության արդյունքները վերահաշվարկի նպատակով հրավիրված նիստում նա այս փաստը թաքցրել է և չի էլ ակնարկել, որ ինքն քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ եղել է նշված տեղամասում: Հարկ է նկատել նաև, որ տեսագրությունում հստակ նկատելի է, որ Օլեգ Գրիգորյանն ինչ-որ պատճառով խիստ զայրացած է:

Այդ ընթացքում նա պարբերաբար հեռախոսով զրուցելով ինչ-որ բան է փորձում պարզաբանել:

Մայիսի 14-ին ժամը 22:35-ին Արսեն Համբարձումյանը պարկը փակելով առանց կնքելու, ստորագրելու և մյուսներին նման հնարավորություն տալու, տեղադրել է քվեատուփի մեջ:

Մայիսի 14-ին ժամը 22:39-ին Արսեն Համբարձումյանը փակել է քվեատուփը;

Մայիսի 14-ին ժամը 22:46-ին քվեատուփը տեղափոխվել է և տեղադրվել է տեղամասում տեղադրված տեսախցիկի ներքևում տեսախցիկի տեսադաշտից դուրս: Դրանից հետո տեղամասում գտնվողները տեղամասից հեռանում են :

Մայիսի 14-ին ժամը 22:46-ից մինչև ժամը 23:24-ն ընկած ժամանակահատվածում մի քանի անձինք, այդ թվում ոստիկանները պարբերաբար ներսուդուրս են անում տեղամաս: Ժամը 23:24-ին Արսեն Համբարձումյանը մի քանի անձանց հետ սկսում է հավաքել տեղամասի գույքը:

Մայիսի 14-ին ժամը 23:25-ին տեղամասի գույքը, այդ թվում նաև քվեատուփը, որի մեջ տեղադրվել էր պարկը, դուրս է բերվել տեղամասից:

Վերաբերելի իրավակարգավորումները

ՀՀ Սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է. «1.Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ»: Այս դրույթի բովանդակությունը նույնությամբ արտացոլված է ՀՀ Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետում:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի լիազորությունները սահմանող ՀՀ ԸՕ 51-րդ հոդվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետում ամրագրված է. «Վերացնում, ուժը կորցրած, անվավեր կամ չեղյալ է ճանաչում ընտրական հանձնաժողովների սույն օրենսգրքին հակասող որոշումները, բացառությամբ Գյումրու և Վանաձորի ավագանու անդամներ ընտրվելու, համայնքի ղեկավար կամ ավագանու անդամներ ընտրվելու մասին տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումների»:

ՀՀ ԸՕ 68-րդ հոդվածը սահմանում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման կարգը: Նշված հոդվածի 4-րդ կետը սահմանում է. «Երևանի,

Գյումրու, Վանաձորի ավագանիների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ հանձնաժողովի նախագահը քվեատուփից հանում է քվեարկության մեկ ծրար, ցուցադրում է այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար, քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը և հայտարարում քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին: Վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է նաև, թե որ թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության օգտին է քվեարկված: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և առարկության ընդհունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեաթերթիկը դրվում է ընտրություններին մասնակցող կուսակցության կամ թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեարթեթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ ծրարը: Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար: Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, թեկնածուների օգտին քվեարկված քվեաթերթիկները և անվավեր քվեաթերթիկները տեսակավորվում են առանձին-առանձին: Քվեարկված քվեաթերթիկները տեսակավորելուց և հաշվարկելուց հետո ստացված թվերը բարձրաձայն հայտարարվում և գրանցվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում»:

ՀՀ ԸՕ 68-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է. «Հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանված կարգով փաթեթավորվում են, իսկ փաթեթները կնքվում և տեղադրվում են պարկում: Փաթեթների վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը:Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձիք ևս իրավունք ունեն ստորագրելու փաթեթների վրա: Գրանցամատյանում գրառվում են ստորագրողների անուն-ազգանունները, դրվում ստորագրության նմուշները»:

ՀՀ ԸՕ 71-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է. «Պարկի վրա պետք է առկա լինի հանձնաժողովի նախագահի ստորագրությունը: Հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս իրավունք ունեն ստորագրելու պարկի վրա: Գրանցամատյանում գրառվում են ստորագրողների անուն-ազգանունները, դրվում ստորագրության նմուշները: Ընտրական փաստաթղթերի պարկը տեղամասային ընտրական հանձնաժողովում պետք է փակվի: Տեղամասային ընտրական հանձնաժողովում այդ պարկը սահմանված կարգով փակելու համար պատասխանատու է հանձնաժողովի նախագահը»:

ՀՀ ԸՕ 48-րդ հոդվածի 15-րդ կետը սահմանում է. «15. Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական

հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ մինչև ժամը 18:00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում»:

ՀՀ ԸՕ 49-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է. «6. Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, իսկ ընտրական հանձնաժողովը իր կայացրած որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Բողոքը քննող ընտրական հանձնաժողովն ի պաշտոնե կարող է ապացույցներ հայթայթել: Սույն մասով սահմանված կանոնները վերաբերվում են նաև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու կամ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներին»:

ՀՀ ԸՕ 75-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո 7-րդ օրը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունված որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, ամփոփում է ընտրության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ»:

Իրավական հիմնավորումները՝

Թիվ 7/51 տեղամասում 2017թ. մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունները պետք է անվավեր ճանաչվեն, քանի որ տեղի են ունեցել ՀՀ Ընտրական օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնց պարագայում այդ տեղամասում ընտրությունների իրական արդյունքները հնարավոր չէ պարզել: Ընտրողները օրենսգրքով նախատեսված կարգով գնացել են տեղամաս և քվեարկել են, սակայն, արդյունքների ամփոփման ժամանակ պարզվել է, որ քվեարթերթիկների վրայից նշումներն անհետացել են: Ասել կուզի անհետացել է ընտրողի կամաարտահայտության մասին վկայող միակ փաստը և 2017թ. մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունների իրական արդյունքներն այս տեղամասում հարկավոր չէ պարզել:

Նման պայմաններում, եթե ԿԸՀ-ն թիվ 7/51 տեղամասում ընտրության արդյունքները համարի վավեր և 2017թ. մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներում դրանք նույնպես ներառի, ապա այդպիսով կվավերացնի նշված տեղամասում տեղի

ունեցած հանցագործությունը, հող ստեղծելով ապագայում դրանց ավելի ծավալուն կրկնության համար:

Թիվ 7/53 տեղամասում 2017թ.մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունները պետք է անվավեր ճանաչվեն, քանի որ քվեարկության արդյունքների ամփոփումը ընդհանրապես կապ չի ունեցել ՀՀ ԸՕ նախատեսված կարգի հետ: Դիմումին կցված տեսագրությունները փաստում են, որ թիվ 7/53 ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահը ընտրությունների ամփոփման ԸՕ-ով նախատեսված գործընթաց չի իրականացվել: Նա ընտրությունների արդյունքների ամփոփման ձևական իմիտացիա է, իրականացնելով քվեարկության իր համար նախընտրելի տվյալները, հանձնարարել է լրացնել քվեարկության արդյունքների ամփոփման արձանագրությունում: Ուստի, նման պայմաններում թիվ 7/53 տեղամասում ընտրությունների իրական արդյունքները հնարավոր չէ պարզել: Հատկանշական է, որ վերջին 2 տարիներին տեղի ունեցած ընտրությունների ընթացքում, ընտրական տեղամասերում արդյունքների ամփոփման ՀՀ ԸՕ-ով նախատեսված կարգի նման կոպիտ խախտման այլ դեպք չէր արձանագրվել: Եթե ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կամայական գրված թվերը ներառի 2017թվականի Երևանի ավագանու ընտրություններում իբրև թիվ 7/53 տեղամասում քվեարկության արդյունք, ապա այդպիսով կխրախուսի ապագայում նման դեպքերի կրկնությունը:

Օրենսդիրը ՀՀ ԿԸՀ-ին լիազորել է ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումները քննարկել ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում առանց առանձին որոշում կայացնելու: Ավելին, ՀՀ ԿԸՀ-ին պատվիրակված է ընտրությունների արդյունքները ամփոփելիս հաշվի առնել իր տրամադրության տակ առկա բոլոր փաստերը և դրանք քննարկելուց, դրանց լուծումներ տալուց հետո միայն կարող է ամփոփել քվեարկության արդյունքները: Սույն դիմումով ՀՀ ԿԸՀ-ին ներկայացված են թիվ 7/51 և 7/53 տեղամասերում 2017թ. մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար առավել քան բավարար փաստեր:

Ցանկանում ենք նախապես հակադարձել հնարավոր այն մոտեցմանը , թե ՀՀ ԿԸՀ-ի լիազորությունների մեջ նշված չէ որ այդ մարմինն իրավասու է առանձին տեղամասում ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչել: ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը լիազորված է վերացնել, ուժը կորցրած կամ անվավեր ճանաչել ստորադաս ընտրական հանձնաժողովների կողմից ՀՀ Ընտրական օրենսգրքի խախտմամբ ընդունված որոշումները, բացառությամբ Գյումրու և Վանաձորի ավագանու անդամներ ընտրվելու, համայնքի ղեկավար կամ ավագանու անդամներ ընտրվելու մասին տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումների: Այսպիսով, օրենսդիրը չի բացառել, որ օբյեկտիվորեն կարող են լինել դեպքեր, երբ ստորադաս հանձնաժողովի կողմից թույլ տրված ՀՀ Ընտրական օրենսգրքի խախտումը վերացնելու միակ արդյունավետ օղակը կլինի հենց ՀՀ ԿԸՀ-ն՝ Սահմանադրական այն մարմինն, որը կոչված է ապահովել ընտրությունների օրինականությունը: Տեղամասում քվեարկության արդյունքների

արձանագրությունն այն իրավական ակտն է, որը կազմվում է տվյալ տեղամասի ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության ավարտի պահից 20:00-ից մեկնարկած նիստի վերջում: ՀՀ ԿԸՀ-ն պարտավոր է անվավեր ճանաչել թիվ 7/51 և 7/53 տեղամասերում քվեարկության արդյունքներն ու առանց դրանց ամփոփել 2017թվականի մայիսի 14-ին Երևանի ավագանու ընտրությունների արդյունքները:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձանաժողովն իր գործունեության ընթացքում բազմիցս իրականացրել է գործառույթներ, որոնց համար ՀՀ ԸՕ-ով ուղղակի լիազորված չէ: Մասնավորապես, հայտնի է, որ ՀՀ ԿԸՀ-ն ընտրությունների ընթացքում մշտադիտարկում է մամուլը և արձագանքում, իրավական ընթացք է տալիս ընտրախախտումների մասին մամուլում տեղ գտած հրապարակումներին: Իսկ արդյունքներն էլ արտացոլվել են տվյալ ընտրությունների արդյունքների ամփոփման մասին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձանաժողովի կայացրած որոշումներում: ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը լիազորված չէ մշտադիտարկել մամուլը, սակայն, որպես ընտրությունների օրինականության համար պատասխանատու սահմանադրական մարմին, իրավացիորեն իրականացնում է այդ և մի շարք այլ գործառույթներ:

Ներկայացնելով վերոգրյալը դիմումատուն պահանջում է Թիվ 7/51 և 7/53 ընտրական տեղամասերում 2017թ. մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչել ու դրանք չներառել 2017թ. մայիսի 14-ի Երևանի ավագանու ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ամփոփված արդյունքներում:

<u>2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը</u>

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերի համաձայն.

«Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն միայն՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.

2) վստահված անձը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին.

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին:

13. Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում իրավունք ունեն ներկայացնելու կուսակցությունը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն»:

Նույն հոդվածի 14-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն.

«Եթե դիմումի քննարկման արդյունքով տարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, ապա տարածքային ընտրական հանձնաժողովն այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերն ուղարկվում են դատախազություն»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի վերոհիշյալ, ինչպես նաև մի շարք այլ իրավանորմերի (հոդվածներ 141, 142 և այլ) համակարգային վերլուծությունից ակնհայտ է, որ Ընտրական օրենսգրքով հստակ առանձնացված են երկու ինստիտուտներ՝ «ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու» և «ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու»: Հարկ է նկատել, որ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այդ տեղամասում նշանակում է վերաքվեարկություն:

Ավելին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի, 44-րդ հոդվածի 13-րդ մասի, 45-րդ հոդվածի 5-րդ մասի, 48-րդ հոդվածի 12-14-րդ մասերի, 50-րդ հոդվածի, 53-րդ հոդվածի և մի շարք այլ իրավադրույթների պահանջները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ տեղամասում քվեարկության արդյունքը դա տվյալ տեղամասում քվեարկության արդյունքն է և ոչ թե ընտրության, քանզի ընտրական տեղամասում՝ ըստ Ընտրական օրենսգրքի իրավակարգավորումների, ընտրության արդյունք գոյություն չունի:

Նման պայմաններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 7/51 և թիվ 7/53 ընտրական տեղամասերի հետ կապված վիճարկման առարկա կարող են հանդիսանալ այդ ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները և ոչ երբեք գոյություն չունեցող ընտրության արդյունքը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ «Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացվել **միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով** իրավասու անձի կողմից՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն»:

Եթե դիմումի քննարկման արդյունքով տարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, ապա **տարածքային ընտրական հանձնաժողովն այդ ընտրական տեղամասում**

քվեարկության արդյունքներն անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերն ուղարկվում են դատախազություն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն.

«5. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում այդ տեղամասում քվեարկության մասնակիցների թիվն արձանագրվում է որպես տեղամասում անճշտությունների գումարային չափ:

6. Քվեարկության արդյունքների արձանագրությունը կազմելիս մնացած տեղամասերի քվեարկության արդյունքներին համապատասխանաբար գումարվում է քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչված տեղամասի քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը: Քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչված ընտրական տեղամասի արձանագրության մյուս արդյունքները (թվերը), բացառությամբ անճշտությունների չափի, արձանագրվում են 0»:

Վերոգրյալից ակնհայտ է, որ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու իրավասությամբ օժտված է միայն և բացառապես տարածքային ընտրական հանձնաժողովը, որին էլ պետք է ներկայացվի համապատասխան դիմումը և այն էլ հստակ սահմանված ժամկետներում՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Դիմողը դիմումը հասցեագրում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը: Եթե դիմում տալու համար սույն օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով: Ոչ իրավասու ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումները կամ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ նշելով պատճառը»:

Դիմումատուն ներկայացված դիմումը նույնացնում և գնահատում է, որպես ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում և փաստում, որ այն պետք է քննության առարկա հանդիսանա Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի իրավակարգավորումներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն.

«Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր

ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում»:

Նախ, հարկ է նկատել, որ նշված իրավակարգավորումը վերաբերում է ոչ թե առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչմանը, այլ ընտրության արդյունքների անվավեր ճանաչմանը, ինչը չի պահանջվել ներկայացված դիմումով:

Ավելին, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն. «Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում իրավունք ունեն ներկայացնելու կուսակցությունը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն»:

Նշված իրավանորմից ակնհայտ է, որ Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում կարող է ներկայացնել միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը):

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«4. Լիազոր ներկայացուցիչն իրավունք ունի՝

1) ծանոթանալու համապատասխան ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին.

2) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու համապատասխան ընտրական հանձնաժողովի նիստերին:»:

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի, 16-րդ մասի 1-ին կետի, 130-րդ հոդվածի 4-րդ մասի համակարգային վերլուծությունից ակնհայտ է, որ «կուսակցություն» և «կուսակցության լիազոր ներկայացուցիչ» եզրույթները չեն համընկնում և կուսակցության համար սահմանված առանձին լիազորություններ չեն կարող իրականացվել լիազոր ներկայացուցչի կողմից՝ իր կարգավիճակի վկայակոչմամբ: Լիազոր ներկայացուցիչը, անգամ եթե նա հանդիսանում է կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու, չի նույնացվում կուսակցության հետ:

Վերոգրյալից ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը հստակ սահմանել է կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցչի գործառույթները, որից հետևում է, որ կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչը, իր կարգավիճակով պայմանավորված (այսինքն՝ հանդես գալով որպես լիազոր ներկայացուցիչ), ինքնաբերաբար չի կարող իրացնել այն բոլոր իրավունքները, որոնք Ընտրական օրենսգրքով սահմանված են կուսակցության, կուսակցությունների դաշինքի համար: Ընտրական օրենսգրքով կուսակցության, կուսակցությունների դաշինքի համար սահմանված իրավունքների իրացնողը հենց կուսակցությունն է (կուսակցությունների դաշինքն է):

Ներկայացված դիմումով որպես դիմումատու հանդես է գալիս «Ելք» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վահագն Հովակիմյանը, ով որևէ հիմնավորմամբ,

այդ թվում՝ իր որպես լիազոր ներկայացուցիչ կարգավիճակով, չի կարող նույնացվել որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտ հանդիսացող «Ելք» կուսակցությունների դաշինքի հետ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերության համաձայն. «Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները, իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումները, ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները, ինչպես նաև սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: Այդ դեպքում ընտրական հանձնաժողովն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ իրականացնելու վարչական վարույթ:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ սույն դիմումով վարչական վարույթի հարուցումը ենթակա է մերժման:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթ իրականացնելու համար հիմքեր առկա չեն, քանի որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն իրականացրել է թիվ 7/51 և թիվ 7/53 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների վերահաշվարկ: Թիվ 7/51 ընտրական տեղամասի հետ կապված տեղեկություններն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն, իսկ թիվ 7/53 ընտրական տեղամասի վերահաշվարկի ժամանակ որևէ իրավախախտում չի հայտնաբերվել և վերահաշվարկի աշխատանքներին ներկա գտնվող «Ելք» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի թեկնածու Դ. Խաժակյանի և նույն դաշինքի վստահված անձ Մ. Սարդարյանի կողմից որևէ առարկություն չի ներկայացվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Ելք» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Վահագն Հովակիմյանի՝ 7/51 և 7/53 տեղամասերում 2017թ. մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջի մասին դիմումով վարչական վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**